



ՂԵՎՈՆԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳՆԵՐԵՆ

Ութերորդ դարի նշանավոր մատենագիր Ղևոնդ վարդապետ (կամ երեց) պատմիչին միջնադարում օգտագործել և հիշել են՝ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը (Ժ դար)¹, Սամուել Անեցին (ԺԲ դար)², Մխիթար Անեցին (ԺԲ դար)³, Կիրակոս Գանձակեցին (ԺԳ դար)⁴, Մխիթար Այրիվանեցին (ԺԳ դար)⁵ և Խաչատուր Ջուղայեցին (ԺԸ դար)⁶: Սակայն նույն ԺԸ դարում հայ նոր պատմագրության հիմնադիր Մ. Չամչյանը չի հիշում նրան իր օգտագործած հայ պատմիչների շարքում և ոչ էլ օգտագործում է նրա պատմական երկը: Ղևոնդին ԺԹ դարում հիշում են Խ. Ս. Սումայանը⁷ իր իտալերեն հայ մատենագրության պատմության մեջ, ապա Խ. Ղ. Խնձիճյանը⁸ իր եռահատոր աշխատության մեջ և վերջապես Նոր հայկապան բառա-

րանի հեղինակները⁹, որոնք ձեռագիր վիճակում օգտագործել են նրա բնագիրը:

Ղևոնդը համեմատաբար ուշ հրատարակված հայ մատենագիրներից է: Անցյալ դարի կեսերին Փարիզում Կ. վրդ. Շահնապարյանցի ջանքերով իրար ետևից լույս են տեսնում նրա պատմության ֆրանսերեն թարգմանությունը (1856) և հայերեն բնագիրը (1857), ապա Բ. Պատկանյանը Պետերբուրգում հրատարակում է ռուսերեն թարգմանությունը (1862), իսկ Ս. Մալխասյանցը պատրաստում է ավելի ընտիր հրատարակությունը, որը լույս է տեսնում 1887 թվականին նույնպես Պետերբուրգում, Կ. Ելյանի ջանքերով:

Եվ ահա երկար ընդմիջումից հետո Ղևոնդի պատմությունը 1982 թվականին մեկ տարում երկու հրատարակություն ունեցավ՝ անգլերեն թարգմանությոնը¹⁰ հեռավոր Ատլանտյանի ափերին՝ Փիլադելֆիայում և աշխարհաբարը Հայաստանի ոստանում¹¹:

Ղևոնդի պատմական երկը անգլիախոս աշխարհին ներկայացնող Տ. Չավեն ծ. վ. Արլումանյանը արդեն 1977 թվականից մեկ ծանոթ էր Ղևոնդի պատմության ձեռագրերի մասին իր հոդվածով, որը լույս էր տեսել «Էջմիածին» ամսագրի էջերում: Այսօր մեր

¹ Ստեփանոսի Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 7:

² Սամուէլի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի շրջոյ պատմագրաց, Ս. Էջմիածին, 1893, էջ 3:

³ Մխիթարայ Անեցույ պատմութիւն, Պետերբուրգ, 1879, էջ 15:

⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1961, էջ 7:

⁵ Մխիթարայ Այրիվանեցույ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 23:

⁶ Խաչատուրի արեղայի Ջուղայեցույ Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 26:

⁷ S. Somai, Quadro della storia litteraria di Armenia, Venezia, 1829, էջ 62:

⁸ Ղ. Խնձիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Ա. Վենետիկ, 1835, էջ 423—424:

⁹ Նոր Բառգիրք Հայկապեն լեզուի, Ա. Վենետիկ, 1836, էջ 14:

¹⁰ History of Lewond The Eminent Vardapet of the Armenians, Translation, Introduction and Commentary by (Rev.) Zaven Arzoumanian, Philadelphia, 1982.

¹¹ Ղևոնդ, Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր Ղեւոնդյանի, Երևան, 1982:

առջև է Ղևոնդի բնագրի անգլերեն թարգմանությունը՝ ներածությամբ (հայերեն և անգլերեն) և ճոխ ծանոթագրություններով:

Ռ. Հյուստնի հակիրճ երկու խոսքից հետո, ուր նշված են վերջին տարիներին անգլերեն թարգմանված ու հրատարակված (Մովսես Դասխուրանցի, Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի) և թարգմանված, բայց դեռ լույս չը տեսած (Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի, Թովմա վարդապետ Արծրունի, Փավստոս Բուպանդ) հայ պատմագրական երկերը, Տ. Ջավեն ծ. վ. Արվումանյանը հայերեն առաջաբանում հակիրճ ներկայացնում է Ղևոնդի պատմության ուսումնասիրման վիճակը, ապա անցնում ձեռագրերի նկարագրությանը: Անգլերեն առաջաբանում քննության է առնում Ղևոնդի երկի պատմականության հարցը: Ղևոնդի աղբյուրներն է համարում Սեբեոսի պատմությունը, Աստվածաշունչը, Է դարի Աշխարհացոյցը և հունարեն վավերագրեր: Սակայն մեծ չափով օգտվել է նաև բանավոր աղբյուրներից: Կարելի է ավելացնել, որ Ղևոնդը օգտվել է նաև Ագաթանգեղոսի ոճից: Ինչ վերաբերում է Ղևոնդի հաջորդներին, ապա ցույց է տրված, որ Թովմա Արծրունին, թեպետ չի հիշում նրան որպես աղբյուր, այսուհանդերձ բնագրային համեմատությունը բացահայտում է Թովմայի կախումը Ղևոնդից:

Ղևոնդը հավանաբար օգտագործել է հայերեն Աստվածաշունչը, բայց միաժամանակ նրա մոտ հայերեն Աստվածաշնչի բնագրից տարբեր տողերի ենք հանդիպում: Օրինակ՝ վկայակոչելով Եսայի մարգարեին (Եսայի, Լ, 13), գրում է «մայրիւ եւ պեկիւ եւ պեկիւ-միսաւ»¹², իսկ հայերեն Աստվածաշնչում նույն տեղում գտնում ենք «սարդին եւ սօսիւ եւ նոճով»: Ուստի, նա կարող էր նաև ուղղակի հունարեն Աստվածաշնչից (Եթաւնասից) թարգմանած լինել:

Ընդգծելուց հետո Ղևոնդի պատմության նշանակությունը Հայաստանի արաբական ջրջանի քաղաքական վիճակի և հարկերի ուսումնասիրման համար, Տ. Ջավեն ծ. վ. Արվումանյանը քննության է առնում Բյուպանդիայի Լևոն Գ Իսավրացի կայսեր պատասխան նամակը Օմար Բ խալիֆային: Այս հարցին անդրադարձել էր Ա. Ջեֆրին¹³ տալով Լևոն Գ-ի նամակի ամբողջական անգլերեն թարգմանությունը և առաջին անգամ խոսելով այդ նամակի լատիներեն տարբերակի գոյության մասին: Շատ հետաքրքրական է, որ գրախոսվող աշխատության մեջ հիշվում է 1501 թվականին Լեյդենում (Հոլան-

դիա) հրատարակված ժողովածուի մեջ¹⁴ Լևոն Գ-ի նամակի լատիներեն թարգմանության առկայությունը, որի վերնագրում ասված է, թե այս լատիներեն բնագիրը թարգմանված է ասորերենից: Ի դեպ բոլոր հրատարակությունների մեջ այս նամակը (լատիներեն) վերագրվել է Լևոն Չ Իմաստասերին, որի հետևանքով աննկատելի է մնացել: Ղևոնդի մեջբերած նամակը և այս լատիներեն տարբերակը բնականաբար պետք է ունենան մի հունարեն (գուցե նաև ասորերեն) բնագիր, որից օգտվել են:

Ղևոնդի բնագրի անգլերեն թարգմանության լեզուն հարթ է և հարապատորեն արտահայտում է բովանդակությունը: Տողատակ նշված են տարբերությունները՝ հայերեն: Նախարար, իշխան (Հայոց իշխան), դասուակերտ, տաճիկ, վարդապետ, սպարապետ և այլ հայերեն բառեր թարգմանության մեջ բերված են լատիներեն, սակայն համապատասխան բացատրություններով:

Ղևոնդի թարգմանությունն օժտված է ճոխ ծանոթագրություններով: Թե՛ պատմական անձնավորությունների (Հերակլ, Թեոդորոս Ռշտունի, Գրիգոր Մամիկոնյան, Սահակ և Համապասպ Արծրունի եղբայրներ և այլն), թե՛ պատմական երևույթների մասին տրված են հետաքրքրական բացատրություններ, որ վկայակոչված են բազմալեզու աղբյուրներ և ուսումնասիրություններ: Այս առթիվ կուպենայինք մի լրացում կատարել: Վերջին տասնամյակներում հայտնի դարձան երկու արաբ պատմիչների երկեր, որոնք երկար ժամանակ անտիպ էին մնացել և որոնք նոր տեղեկություններ են հաղորդում 703 թվականի հայերի ապստամբության և 705-ի Նախճավանի ու Խրամի արյունալի դեպքերի մասին: Դրանք են Նալիֆա իբն Նալլաթը (Թ դար) և Իբն ալ-Ասամ ալ-Քուֆին (Ժ դար): Երկուսն էլ ընդգծում են, որ արաբները մեծ դժվարությամբ կարողացան ձևել 703-ի ապստամբությունը Հայաստանում, իսկ Նախճավանի ու Խրամի դեպքերի մասին Քուֆին վկայում է, որ հայ նախարարներին եկեղեցիները մտցրին համոզելով և խաբելով (ինչպես գտնում ենք հայկական վարձագրական աղբյուրներում) և ոչ թե բռնությամբ, ինչպես

¹³ A. Jeffery, Chevond's Text of the Correspondence Umar II and Leo III, Harvard Theological Review, 37, 1944, p. 269-332.

¹⁴ History of Lewond, p. 43-44.

¹⁵ The History of Khalifah ibn Khayyat. vol. 1-2, Ed. by A. D. al-Umari, Al-Adabe Nagav, 1967.

¹⁶ Ibn al-Atham al-Kufi, Kitab al-Futuh, v. I-VIII, Hyderabad, 1968-1975.

¹² Պատմություն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց, Պետերբուրգ, 1887, էջ 90:

պատմում են Ղևոնդը և մյուս հայ պատմիչները: Բացի այդ, Քուֆին վկայում է, որ եկեղեցիների՝ վրա նավթ (քարյուր) թափեցին ու վառեցին:

Ջավեն ծ. վ. Արվումանյանը հարուստ գրականություն է ընդգրկել առաջաբանի և հատկապես ծանոթագրությունների համար: Հայկական աղբյուրները գրեթե ամբողջովին օգտագործված են տարբեր հարցերի պարզաբանման համար և հատկապես՝ Սեբեոս, Թովմա Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Ստեփանոս Օրբելյան և Վարդան: Արաբ պատմիչներից ներգրավված են՝ Բալապուրի, Իբն Խորդադեհ Իբն ալ-Ֆակիհ, Ագապիոս Մանբիջեցի, Թաբարի, Իբն ալ-Ասիր և այլն, բյուզանդական պատմիչներից՝ Թեոփանես, Կոստանդին Ծիրանածին, Կեդրենոս, իսկ ասորական աղբյուրներից՝ Դիոնիսիոս Տելլ Մահրացի, Միքայել Ասորի, Բարեբրեոս: Հարուստ է օգտագործված ուսումնասիրություն-

ների ցուցակը, ուր ներգրավված են Հայաստանի արաբական շրջանի մասին հիմնական աշխատությունները: Դժբախտաբար լեզվական դժվարության պատճառով չի օգտագործված մեր ռուսերեն մենագրությունը՝ «Հայաստանը և արաբական խալիֆայությունը», Երևան, 1977:

Այսպիսի օգտակար աշխատանք կատարելով Տ. Ջավեն ծ. վ. Արվումանյանը շարունակում է մեր եկեղեցական հայագետների (Մադաքիա պատրիարք Օրմանյան, Գարեգին արք. Սրվանձտյանց, Գալուստ Տեր Մկրտչյան (Միաբան), Մեսրոպ եպս. Տեր Մովսիսյան, Գարեգին կաթողիկոս Հովսեփյան և ուրիշներ) պանծալի ավանդույթները: Մաղթենք, որ նա նոր աշխատանքներով բեղմնավորի հայագիտության անդաստանը:

ԱՐԱՄ ՏԵՐ ՂԵՎՈՆԴՅԱՆ
(Պատմական գիտությունների դոկտոր)

